

Ուրիշներ ալ կային անշուշտ ասոնց նման, միշտ Երկու դասակարգի բաժնուած, մէկը՝ միամիտներու, որոնք անկեղծ ազգասիրութեամբ մը աշխատած են Եւրոպայի շարժել ինպատակ Արեւելքի քրիստոնեայ ժողովուրդներուն՝ կեղեքումներու և հարբատահարութեանց ենթակայ, իսկ միւսը՝ խորամանկ արկածախնդիրներ կամ խաչագողներ էին, որոնք առիթէն օգուտ քաղելու առաջադրութեամբ դիմած են Եւրոպա, իրենց ազգին փրկութեան աշխատելու ձեւին տակ հանդիսանալով տեսակ մը գործակալներ՝ քրիստոնեայ պետութիւններու, Արեւելքի մէջ, անշուշտ ի շահ իրենց անձին։

Արդարեւ, այդ օրերու Ֆրանսան մէկն էր այն պետութիւններէն, որոնք իրենք զիրենք բարեացակամ ցոյց կու տային Հայերու, Արեւելքի մէջ իրենց քաղաքական խաղերուն գործիք ծառայեցնելու համար զանոնք։

Այսպէս՝ այդ դարուն Փարիզ և Մարսիլիա հաստատուած էին բաւական թուով Հայեր։ Ասոնցմէ մէկը ըլլալ կը թուի Յովհաննէս Թիւթիւնճի, երբեմնի Պոլսոյ պատրիարքը, Աղթամարի կաթողիկոսը, Վանի առաջնորդը, որ, ինչպէս տեսնուեցաւ, իր ամբողջ կեանքին մէջ եղած էր որքան ձեռներէց և գործունեայ, նոյնքան արկածախնդիր դէմք մը։ Ան Ֆրանսա գացած էր՝ ապանովաբար Լուի Ժ. Ի օրերուն

---

խնդիրներ ալ Արեւելքի մեջ զան մը յափօսակելու կամ դիրք մը շինելու հետամուտ եղած են։ Այս մասին կը քննադրենք կարգաւ Adrien Blanchetի «Un aventurier Français devenu vice-Roi d'Arménie au temps d'Henri IV. Revue des Etudes Arméniennes» մէջ T. X. f. 2. էջ 189-192)։